

պատկերը՝ աւելի քան որ և է այլ ինչ, և այն՝ նոյն իսկ իր ինչ ինչ կողմերով աղճատուած վիճակին մէջ: Իսկ աւելի կանուխ՝ Պէշիկթաշլեանի օրով սկսուած, Հաստէնի և Շէքեան վարդապետով տխարուած կաթոլիկներու ընդդիմութեան բաղկած, և յետոյ վերջերը աւելի ընդարձակ չափով կատարուած ոգևորութիւնը, հայրենասիրական հոսանքներու միջոցաւ ամէն կողմ և նոյն իսկ ազգին ամենէն խորթացած տարբերուն մէջ ճիւղաւորած, արդիւնքն էր թէ՛ այս կամ այն ներգործութեան, այլ Ազգ. Սահմանադրութեան առաջին օրէն մշակուած և ևնտղհետէ միշտ աւելի արծարծուած այն յոյսերուն և մտատկապին՝ որոնց վառարանը եղաւ միշտ մեր Մայրենի, այսինքն Հայաստանեայց եկեղեցին:



ՆԱՄԱԿ Ս. ԷԶՄԻԱՍՆԷՆ

Վեհ. Հայրապետը հետեւեալ նամակը ուղղած է Սրբազան Պատրիարք Հօր ազգային բարերար Կարապետ Մելգոնեանի մահուան առթիւ:

Ս. ԵՐԱՍԱՂԻՄԻ ԱՄԵՆԱԿԱՏԻՍ ՊԱՏՐԻԱՐԿ
Տ. ԹՈՐՈՒՄ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Քրիստոսաւանդ ողջոյն եղբայրական
և օրհնութիւն Հայրապետական

Սիրելի լծակից եղբայր Մեր,

Տարւոյս յուլիս 26 թուակիր գրութեամբ գումար էիք Մեզ Ազգային մեծ բարերար՝ Տեառնապետ Մելգոնեանի մահը:

Բարեգործութիւնը ազգերի, մանաւանդ փոքր ազգերի կեանքում մեծ դեր է կատարել: Նա մեծ դեր կատարել ու կատարում է յատկապէս մեր կեանքում, որ աշխարհի ամէն կողմ ցիրուցան ընկած հայութեան բեկորներ ունինք, նիւթական և հոգեւոր բազմապիսի կարիքների մէջ և աջակցութեան կարօտ:

Կաղութահայութիւնը ընդհանուր առմամբ՝ իր ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու և ազգային մշակութիւնը պահպանելու համար՝ կարօտում է երեք խոշոր գործօնների հայ եկեղեցու, հայ դպրոցի և հայ գրականութեան: Հայ եկեղեցին ի մի է

խմբում և պատմական թանկարժէք աւանդներ տալիս նրան, հայ դպրոցը հայապատկան սերունդը՝ մարդկով նրա միտքն ու սիրտը, իսկ հայ գրականութիւնը կեանքի ղեկավար սկզբունքներ տալիս նրան, և երեքը միասին զարգացնում են հայ մշակութիւնը:

Այս հաստատութիւնները պահպանուել և պահպանուում են գաղութահայ կեանքում բացառապէս բարեգործութեամբ. ահա թէ ինչո՞ւ բարեգործութիւնը մեր կեանքում մեծ արժէք է ստացել և բարերարները գնահատուելու մեծապէս փառաբանուել են: Ազգային այս մեծ բարերարների շարքում պատուաւոր տեղ է բռնել Մելգոնեան տունը, որ իւր մեծագումար աւանդով և առատ նուիրատուութեամբ թէ՛ Մայր երկրում և թէ՛ գաղութավայրերում խրախուսել է յիշատակուած երեք մեծ գործօնները, որով մեծապէս նպաստել և նպաստելու է հայ հոգեւոր կեանքի պահպանութեան, ազգային ինքնագիտակցութեան և մշակութիւնը զարգացման կարեւոր գործին:

Ահա թէ ինչո՞ւ խորապէս վշտացած ենք Մելգոնեան տան մեծ բարերարներից վերջինի մահուան գոյժն առնելով: Վիշտս մեծ է նաեւ այն պատճառով, որ ազգային մեծ բարերարները՝ աշնան տերեւների նման թափուում ու անէանում են հայ հորիզոնից՝ թողնելով մեր սրտերում միայն ապագայի յոյսը թէ՛ կրկին կուգայ գարունը և տերեւաթափ ծառերը կը հաղնին թարմ կանաչ տերեւներ, ազատելով մեր սրտերը ձմռան ճնշիչ ու մահաբեր շնչից և բերելով նոր կենդանարար շունչ:

Նոցա մահուան հանգէպ հայը մի զգացմունք ունի՝ յարգանքի և երախտագիտութեան զգացմունք, որ արտայայտուում է եկեղեցական հրապարակային հոգեհանգստեան հանդէսով, որպիսին տեղի ունեցաւ Մեր տնօրինութեամբ Մայր Տաճարում Ս. Աստուածածնի Վերափոխման հանդիսաւոր Ս. Պատարագից յետոյ: Նոցա մահուան հանգէպ ծանրանում է Մեզ վրայ աղօթելու և օրհնելու պարտականութիւն: Աղօթում եմ Յարուցեալ Փրկչին, որ նորոգ հանգուցեալին իր միութարիչ տեսութեան արժանացնէ: Մողթում

եւմ Կենսատու Փրկչին, որ հանգուցեալի մերձաւորներին երկար ու խաղաղաւէտ կեանք պարգեւէ: Մարթում եւմ Պարզեւտու Փրկչին, որ նոր բարերար և մեծագործ հոգիներ պարգեւէ հայ ժողովրդին հանգուցեալի շաղով ընթացող ի փառս եկեղեցւոյ եւ ի մխթարութիւն Մեր եւ համայն հայութեան:

Իոհ եւմ, որ հանգուցեալի յուզարկւորութեան սգահանդէսին հանգիստալիք լինելով՝ հանգուցեալին արժանի պատիւ և սգահանդէսին մեծ շուք էք տուել և Ձեր դամբանականով Մեր անկիւրի և զգացմունքների թարգման էք հանդիսացել:

Եղբայրական ջերմ սիրոյ ողջոյններով

Աղօթարար

ԽՈՐԷՆ. Ա.

Կարուղիկոս Ամենայն Հայոց

Թ. 1041.

30 Oghnusni 1934 թ.,

Ս. Էջմիածին



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Հոկտեմբեր ամսուան ընթացքին Ս. Աթոռոյա ՏԵՐԵՆ Ժողովը ի նիստ գումարուեցաւ իրիկ վարչական մարմին՝ ութը անգամներ իսկ իրիկ Կրօնական Առևան երեք անգամ, նոյնպէս Ռուսմեական Խորհուրդը երկու անգամ, իւրաքանչիւրը զբաղելով իր իրաւասութեան պատկանած խնդիրներով:

● Բշ. 1 Հօկտ. — Խաչվերացի Մեռելոցին առթիւ ա. պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի մատրան մէջ. քարոզեց Տ. Նորայր վրդ. բացատրեց թէ քրիստոնէին աննահանջելի պարտականութիւնն է աշխատել ապրիլ, որ երկրաւոր կեանքը պատրաստութիւնը ըլլայ յաւիտենական կեանքին: Յաւարտ ա. պատարագի Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Փրկչի ազգային գերեզմանատան մէջ:

● Գշ. 2 Հօկտ. — Վերաբացուեցան Ս. Աթոռոյա Ընծայարանն և փառանքաւորացը, ինչպէս

նաև Ս. Թարգմանչաց ազգային երկեւեւ վարժարանը. այս տարի, առաջին երկուքին ուսուցչական կազմին վրայ աւելցան Պրն. Շ. Պէրպէրեան իմաստասիրութեան և արուեստներու և Պրն. Յ. Սլահկան հայերէնի և ազգային ուստար գրականութեան ճիւղերուն համար:

● Եշ. 4 Հօկտ. — Հեռագրաւ լուր ստացուած ըլլալով որ վաղը Ս. Պատրիարք Հայրը՝ որ շուրջ երկու ամիսներէ ի վեր Եւրոպա կը գտնուէր առողջական դարմանումի համար, Հայֆա պիտի ժամանէ, Լուսարարապետ Տ. Մեօրոպ Սրբազան ընկերակցութեամբ վանուցս աւագ թարգման Տ. Հայրիկ վարդապետի և քարտուղար Պրն. Կ. Հինդլեանի, զիմաւորութեան համար նոյն քաղաքը մեկնեցաւ:

● Աւր. 5 Հօկտ. — Երեկոյեան ուշ առնել Ս. Պատրիարք Հայրը երեսուցամ հասաւ, վանքին մեծ դրան առջև հաւաքուած էին միարանութիւնը, աշակերտք ինչպէս նաև ժողովրդեան մեծ քաղմութիւն մը, որոնք ցնծութեամբ ողջունեցին Ն. Ամենապատուութեան ժամանումը: «Հրաշափառ»ով Ս. Պատրիարքը առաջնորդուեցաւ Մայր-Տաճար, ուր Ս. Գլխադիրին առջև իր ուխտն ընելէ և աւագ սեղանին առջև աղօթելէ ետք օրհնեց ներկայ ժողովուրդը և անոնց հաղորդեց Եւրոպայի հայոց ողջոյնները: Ապա կրկին երգեցողութեամբ առաջնորդուեցաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Տ. Սմբատ Սրբազան, որ Ն. Ամենապատուութեան մեկնումին առթիւ հիւանդութեան առաջին տագնապներուն մէջ կը գտնուէր, այժմ զգալիպէս ապաքինած՝ ոգեւորուած ուղերձով մը բարեկայտատ մաղթեց: Ս. Պատրիարք Հայրը իր ուրախութիւնը յայտնեց միարանութեան և մասնաւորապէս Սմբատ Սրբազանի առողջութեան և իր հեռաւորութեան առնել վանական գործերուն կատարած բարւոք ընթացքին համար:

● Եր. 6 Հօկտ. — Ս. Պատրիարք Շօր այցելեց Մարոնիներուն նոր մեծաւորը, ընկերակցութեամբ քահանայի մը և աշխարհականի մը:

● Կիր. 7 Հօկտ. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ, քարոզչին էր Տ. Տիրան վրդ. Խօսելով Խաչին խորհուրդին մասին ծանրացաւ տառապանքին իրականութեան վրայ և ներկայացուց զայն որպէս միջոց բարձրագոյն կատարելութեան վերանալու:

— Երեկոյեան Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ Ս. Պատրիարք Հայրը. իր Եւրոպայէն դարձին առթիւ սարքեց թէյսեղան մը որուն, ներկայ գտնուեցան միարանութիւնը, սարկաւազունք և բոլոր պաշտօնեաները: Ս. Պատրիարք Հայրը նախ շնորհակալութիւն յայտնեց իր շուրջ երկամեակ քաջակալութեան միջոցին վանական գործերու ընականուն և բարւոք ընթանալուն համար, միակ զէպքը որուն մասին ջառով արտայայտուեցաւ Ն. Սրբազնութիւնը Վերափոխման տօնակատարութեանց առթիւ Ս. Կոյսի գերեզմանին եկեղեցիին մէջ մեր և աւստրոց միջև տեղի ունեցած տխուր միջադէպն